



Իրինա Սեյլանյան
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն

Փետրվարի 06, 2024 թ.

Համաձայնություն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն Արդշինբանկ ՓԲԸ-ին վաճառելու վերաբերյալ

HSBC-ն այսօր հանդես է եկել հայտարարությամբ, որ համաձայնություն է ձեռք բերել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (HSBC Հայաստան) Արդշինբանկ ՓԲԸ-ին (Արդշինբանկ) վաճառելու շուրջ: Գործարքը նախատեսվում է ավարտին հասցնել տասներկու ամսվա ընթացքում՝ կարգավորող մարմինների հաստատումները ստանալու պայմանով:

Ի՞նչ է սա նշանակում ինձ համար

Գիտեմ, որ հարցեր կառաջանան, թե ինչ է այս ամենը նշանակում Ձեզ համար: Այս փուլում Ձեր կողմից որևէ լրացուցիչ գործողություն կատարելու անհրաժեշտություն չկա: HSBC Հայաստանը կշարունակի սպասարկել Ձեզ բնականոն կերպով: HSBC Հայաստանի հետ Ձեր ունեցած բոլոր պայմանագրերի պայմաններն (այդ թվում՝ ավանդների, վարկերի և ներդրումների) անփոփոխ են:

Մինչև կարգավորող մարմինների հաստատումները ստանալը, գործարքը ավարտին հասցնելու համար կլինի անցումային ժամանակահատված: HSBC և Արդշինբանկի մեր թիմերը ջանք չեն խնայի, որպեսզի այդ անցումը Ձեզ համար հնարավորինս սահուն իրականացվի: Ձեր կողմից որևէ գործողություն պահանջվելու դեպքում մենք Ձեզ պատշաճ կերպով կտեղեկացնենք այդ մասին: Միևնույն ժամանակ, հավաստիացնում ենք, որ մենք կշարունակեք Ձեզ մատուցել բարձրակարգ ծառայությունների լայն ընտրանի:

Արդշինբանկի մասին

Արդշինբանկն ակտիվներով ամենամեծ բանկն է Հայաստանում: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ, տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաև փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: Արդշինբանկն ունի ավելի քան 375.000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 1700-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 65 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ և օնլայն բանկինգի համակարգերով: Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաև ներկայացուցչություն Փարիզում:

Ցանկանում եմ սրտանց շնորհակալություն հայտնել մեր բոլոր հարգարժան հաճախորդներին, որոնք ավելի քան 25 տարի մեզ են վստահել իրենց նպատակների իրագործումը: Մեզ համար պատիվ է Ձեզ սպասարկելը: Ակնկալում ենք շարունակել մեր համագործակցությունը անցումային շրջանում ևս: Հարցերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ՝ Ձեզ հարմար եղանակով:

Հարգանքով,

Իրինա Սեյլանյան
Գլխավոր գործադիր տնօրեն
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան